

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
34

Yerevan – 2022

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
34

Ереван – 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

34

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

Խմբագրական խորհուրդ՝ Վ. Տեր-Ղևոնդյան (գլխ. խմբագիր), Գ. Տեր-Վարդանյան, Գ. Մուրադյան (պատասխանատու քարտուղար), Կ. Մաթևոսյան, Վ. Թորոսյան, Թ. Վ. Լինտ, Ա. Մուլթաֆյան, Ա. Շահնազարյան, Գ. Գասպարյան, Ս. Վարդազարյան, Ա. Թամրազյան, Հ. Համբարձումյան:

*«Բանբեր Մատենադարանի» 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2022: 448 էջ (ներդիր 8 էջ):*

*«Բանբեր Մատենադարանի» հանդեսի սույն համարում ընդգրկված են
պատմությունը, բանասիրությունը, արվեստին նվիրված հոդվածներ և այլ նյութեր:*

ՄԱՀԱԽՈՍԱԿԱՆ
OBITUARY
ΗΕΚΡΟΛΟΓ

ՎԱՍՆ ԿԵՆԱՑ ԵՒ ԳՈՐԾՈՑ ՆԻՆԱՅԻ ԳԱՐՍՈՅԵԱՆ՝
(1923-2022)



2022 թ. օգոստոսի 14-ին կյանքից հեռացավ ժամանակակից հայագիտության հիմնասյուներից մեկը՝ պատմաբան Նինա Գարսոյանը՝ չհասցնելով տունել իր հարյուրամյա հոբելյանը:

Անշափ դժվար է պարփակ ներկայացնել վտարանդիների միջավայրից սերող և կին հետազոտողի հաղթահարած բազմահոլով ու բազմաբովանդակ գիտական ճանապարհը՝ նյույորքյան Բրեքլի դպրոցից մինչև ակադեմիական գագաթներ: Մեկդարյա այս պատմութունն ինքնին որպես պատմական արժեք՝ հետազոտողի նույն բարեխղճությամբ, մտավորականի նրբամտությամբ և գրողին վայել հմայիչ ոճով շարադրել է անձամբ Նինա Գարսոյանը՝ հեռատեսորեն

վերնագրելով իր հուշերը պատմաբանի անաչառությամբ՝ *De Vita sua* – «Վասն կենաց իւրոց» (2011 թ.):

Նինա Գարսոյանը ծնվել է Փարիզում, 1923 թ. ապրիլի 11-ին, առաջին աշխարհամարտի և ուսաստանյան հեղափոխական իրադարձությունների հետևանքով Փարիզ տեղափոխված հայկական ընտանիքում: Մայրը՝ Իրինա Գար-

¹ Մահախոսականը շարադրելու համար որպես աղբյուր են ծառայել հետևյալ հրատարակումները. **N. Garsoïan**, *De Vita Sua*, Mazda Publishers, Costa Mesa (CA), 2011; **D. Kouymjian**, "Nina G. Garsoïan: A Professor Who Incubated Scholars, a Scholar Who Vitalized an Historical Era", 145-152; **L. Avdoyan**, "Magistra Studentorum per Armeniam et Byzantium: Nina G. Garsoïan", in **J. Chance** (ed.), *Women Medievalists and the Academy*, University of Wisconsin Press 2007, ch. 58, p. 803-813; "Prof. Nina G. Garsoïan, 1923-2022: A Pioneering Scholar and Mentor", <https://massispost.com/2022/08/prof-nina-g-garsoian1923-2022-a-pioneering-scholar-and-mentor/>; **V. Calzolari**, "Nina Garsoïan", AIEA official Mail.

սոցանը, շնորհալի ու ճանաչված արվեստագետ, սերում էր Ղրիմի հայկական գաղթօջախից, իսկ հայրը՝ Գևորգ Գարսոյանը, թիֆլիսյան, ապա Նոր-Նախիջևանի (Դոնի Ռոստով) հայկական համայնքից: Երկու տարեկանում կորցնելով հորը՝ Նինա Գարսոյանը մեծանում է մոր ու մայրական տատի խնամքի ներքո: 1933 թ., ասես կանխատեսելով եվրոպայի գլխին ծառացած վերահաս վտանգը, մորեղբայրը երեքին հրավիրում է իր մոտ՝ Նյու Յորք, որտեղ էլ մեծամասամբ ծավալվում է ապագա գիտնականի կյանքն ու գործունեությունը: Հայ ժողովրդի բազմաթիվ զավակների նման մանկուց մի քանի լեզու կրող և տարբեր մշակույթներում հասունացած օրիորդ Նինան թերևս շատ տիպական բնորոշում է տվել իր ինքնությունը. «Ես երբեք չեմ կարողացել հասնել միակամ և լիասիրտ հայրենասիրության գիտակցությանը: Ինձ լավ եմ զգում Փարիզում և սիրում եմ Փարիզն ու Վենետիկը, բայց նաև՝ Մոսկվան ու Թբիլիսին, Նանտաքետը և Նյու Յորքը: Սակայն դրանցից ոչ մեկն էլ իմ լիարժեք ու միակ տունը չի եղել: Ենթադրում եմ, որ ազգությունս էս ամբողջովին հայ եմ»:

Այսօր կարելի է հաստատապես պնդել, որ Նինա Գարսոյանի հայրենիքը հայոց պատմագիտությունն էր, իսկ հայրենասիրության բարձրագույն արտահայտությունը հայագիտության միջազգայնացման բնագավառում նրա թողած անուրանալի վաստակը:

Նինա Գարսոյանը երաժշտական արտակարգ ունակություն ուներ, և մանկուց սովորում էր դաշնակահարուհի դառնալու համար: Բայց ճակատագիրն այլ կերպ է տնօրինում նրա ապագան. պատահարի պատճառով վնասում է ձեռքը, և նոտաների աշխարհը փոխարինվում է գրքերի ակադեմիական աշխարհով: 1941 թ. ավարտում է Նյու Յորքի Ֆրանսիական լիցեյը, 1943-ին գերագանց գնահատականով բակալավրի կոչում է ստանում Բրին Մոր Քոլեջում (Bryn Mawr Colege) դասական շրջանի հնագիտության և պատմության մասնագիտությամբ, ապա 1946-ին՝ մագիստրոսական տիտղոսը՝ Կոլումբիա համալսարանում, որտեղ էլ 1958 թ. պաշտպանում է ատենախոսությունը հայ, բյուզանդական և միջնադարյան պատմության գծով՝ ներկայացնելով հայկական Պավլիկյան աղանդավորական շարժումը (The Paulician Heresy, 1967):

Առաջին անգամ էր, որ ամերիկյան համալսարանական շրջանակներում հայկական աղբյուրների վրա հիմնված գիտական աշխատանք էր ընդունվում որպես դոկտորական ատենախոսության թեմա: Այդուհետ, կարելի է ասել, «առաջամարտիկ կնոջ դափնին» սրընթաց ուղեկցում է Նինա Գարսոյանին: 1956-65 թթ. պատմություն է դասավանդում Մասաչուսեթսի Նորթամփթոն օրիորդաց քոլեջում, սակայն արդեն 1962-ից ընդունվում է Կոլումբիա համալսարան՝ հրավիրյալ դասախոսի կարգավիճակով, իսկ 1965-ին այստեղ ստանում է լիարժեք դոցենտի (Associate Professor) կոչում՝ դասավանդելով միաժամանակ Միջինարևելյան լեզուների ու մշակույթների և Պատմության ֆակուլտետներում: Այսպիսով, Նինա Գարսոյանի նպատակասուլացության, հայկական հաստատությունների և բարերարների ջանքերով Հայագիտական ծրագիրը լրիվ դրույքով մուտք

է գործում համալսարան՝ դառնալով գիտա-ուսումնական ամուր հիմք՝ հետազոտողների նոր սերնդի համար: Հարկ է շեշտել, որ 1960-ականներին նրա հետ ընդամենը մեկ այլ կին դասախոս կար ամբողջ ֆակուլտետում, և այս առիթով հնարավոր չէ չհիշատակել հայագիտության մեկ այլ մեծ երախտավոր, Գարսոյանի ուսուցիչներից մեկին՝ Սիրարփի Տեր Ներսեսյանին, որ առաջին և երկար տարիներ միակ կին գիտնականն էր Վաշինգթոնի Dumbarton Oaks բյուզանդագիտական կենտրոնում (հիմնադրվել է 1940 թ.):

Ստանալով նշանավոր Ֆուլբրայթ հիմնադրամի կրթաթոշակը՝ Գարսոյանն իր կրթությունը լրացնում է Վենետիկում՝ ուսումնասիրելով Միսիթայան միաբանության հավաքածուի ձեռագրերը և պարապելով գրադարանում, իսկ 1961-62 թթ., որպես հետդոկտորական ծրագիր Փարիզում հետևում է դասական հայերենի և իրանական բարբառագիտության դասընթացներին հին լեզուների դասավանդման հայտնի Institut catholique-ում և Սորբոնի համալսարանի Ecole des hautes études-ում: Նրա ուսուցիչներն էին հայագիտության և իրանագիտության երկու խոշոր մասնագետներ Շառլ Մերսիեն և էմիլ Բենվենիստը:

Ընդամենը երեք տարի անց՝ 1965-ին, Նինա Գարսոյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում. նա դառնում է առաջին կին պրոֆեսորը Կոլումբիայի համալսարանի պատմության ֆակուլտետում: Իսկ 1973-ին ստանձնում է Միջինարևելյան լեզուների և մշակույթների ամբիոնի վարիչի պաշտոնը: 1977-ին նրան հրավիրում են ղեկավարելու Փրինսթոնի համալսարանի մագիստրոսական դպրոցը, ուր նա դառնում է առաջին կին ղեկանը: Վերջապես, 1979-ին, բարեհաջող դրամահավաքի շնորհիվ, Կոլումբիա համալսարանում բացվում է երկար փափագված Հայոց պատմության և քաղաքակրթության ամբիոնը, որ կրում է Գևորգ Մ. Ավեդիսեանի անունը: Նա ղեկավարում է ամբիոնը մինչև աշխատանքային տարիքի ավարտը՝ 1993 թ.:

Նինա Գարսոյանի անսպառ եռանդը ծավալվում է նաև հայագիտական ու հումանիտար հետազոտությունների այլ միավորների ստեղծման ուղղությամբ: Կոլումբիա համալսարանում նա հիմնադրում է արևմտյան գիտական շրջանակներում ամենաազդեցիկ հայագիտական և բյուզանդագիտական կենտրոններից մեկը, այնուհետև, Ռիչարդ Հովհաննիսյանի գործընկերությամբ հիմնադրում են Հայագիտական ընկերությունը (Society for Armenian Studies): Ավելի քան վաթսուներեք տարի Գարսոյանը եղել է Հայագիտական ուսումնասիրության և հետազոտությունների ազգային ընկերության (NAASR – National Association for Armenian Studies and Research) անդամ և երկար տարիներ աշխատակցել Գիտական խորհրդին: Նաև ընտրվել է American Council of Learned Societies ընկերությունում որպես կազմակերպիչ անդամ, ապա՝ փոխնախագահ, և Հայագիտական ուսումնասիրությունների միջազգային ընկերության (AIEA) պատվավոր անդամ: Փարիզում նա անդամակցում էր հեղինակավոր *College de France*-ի բյուզանդական քաղաքակրթության և պատմության կենտրոնին, իսկ 1984-89-ից մինչև կյանքի վերջը որպես խմբագիր, իսկ հետո տնօրեն աշխա-

տակցում էր հեղինակավոր հայագիտական հանդեսին՝ *Revue des études arméniennes*-ին: 1992 թ. առաջադրվել է Ամերիկայի Միջնադարյան ակադեմիայի անդամ, իսկ 2002-ին՝ Բրիտանական ակադեմիայի թղթակից անդամ, որ հազվադեպ շնորհ է ոչ բրիտանացի գիտնականների համար:

Նինա Գարսոյանը երկու տասնյակի հասնող մենագրությունների, կոլեկտիվ հետազոտությունների և գիտական թարգմանությունների հեղինակ է, հրատարակել է հարյուրավոր հոդվածներ և նյութեր, այդ թվում՝ խոշոր հանրագիտարաններում, կրթել հայագետների մի քանի սերունդ:

Նա մի շարք բարձր պարգևների է արժանացել, այդ թվում՝ հայկական հաստատություններից. 1993 թ. Մեծի տանն Կլիվլիոյ կաթողիկոս Գարեգին Ա նրան շնորհել է Մեսրոպ Մաշտոցի մեդալը, իսկ 1998 թ. Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան պարգևատրել է Անանիա Շիրակացի մեդալով, որ հազվադեպ է շնորհվում արտասահմանցի գիտնականներին:

Նինա Գարսոյան պատմաբանի կարևոր ավանդն է հայոց պատմության ուսումնասիրությունն արևմտյան մեթոդաբանությամբ՝ միջինարևելյան, կովկասյան և իրանական մշակութային աշխարհի համատեքստում: Այս առումով հանգրվանային է նրա՝ Փավստոս Բուզանդի Հայոց պատմության անգլերեն թարգմանությունը (*Buzandaran Patmut' iwnk'*, *Epic Histories*, 1989). այդ գրքում ներածությունը, ծանոթագրությունները, անվանացանկերն ու թեմատիկ բացատրական բառարանը եռակի ծավալ են կազմում թարգմանության համեմատությամբ: Մխաված չենք լինի՝ ասելով, որ այն Դ-Ն դարերի հայոց պատմության ու մշակույթի հանրագիտական անսպառ աղբյուր է:

Նինա Գարսոյանի հետագա աշխատանքները քննության առարկա են դարձնում Հայոց եկեղեցու պատմությունը և հաստատութենական կազմավորումը, վաղբրիստոնեական շրջանի դավանական հարցերը և եկեղեցիների բաժանումը, հայ քրիստոնեական ինքնության ձևավորումը, վանական մշակույթի սկզբնավորումն ու զարգացումը, և է դարի հայկական իրողությունների պատմաքաղաքական գնահատականը: Նա հավասար ջանադրությամբ ուշադրության է արժանացրել Հայոց աշխարհի ինչպես քաղաքական, այնպես էլ հասարակական ու ռազմական պատմության էջերը՝ փորձելով, որքան հնարավոր է, չմիջամտել աղբյուրների հայտնած տեղեկություններին, ըստ իր անխախտ սկզբունքի, որ «պետք է թույլ տալ, որ աղբյուրներն իրենք խոսեն, և բոլոր տեսակի սկզբնաղբյուրները պետք է քննել ու օգտագործել՝ առանց երբևէ դրանք փոփոխելու»:

Մենագրություններում և հոդվածներում նա ցուցաբերել է նույնպիսի ճշգրտություն՝ ամենայն մանրամասնությամբ և բժախնդրությամբ հետազոտելով և՛ սկզբնաղբյուրները, և՛ մասնագիտական գրականությունը: Պատմաբանի համոզմամբ՝ անհրաժեշտ է մշտապես վերագնահատել ավանդական գիտելիքը՝ հիմնվելով հրապարակ եկած նոր փաստերի կամ ապացույցների վրա: Իսկ նրա շարադրանքը, անցյալի գիտական սկզբունքին համահունչ, միանգամայն

սահուն է ու ընկալելի, պատմագրությունը գրեթե հասցված է գեղարվեստական գործի մակարդակի: Նշենք միայն ամենահիմնարար աշխատությունները. *Armenia between Byzantium and the Sasanians* (1985), *Church and Culture in Early Medieval Armenia* (1999), *L'Église arménienne et le grand schisme d'Orient* (1999), *Interregnum* (2012):

Ինչպես հաճախ է պատահում իրենք գիտակարգում նոր ճանապարհներ հարթող գիտնականների հետ, Նինա Գարսոյանի պատմագիտական մեկնաբանություններն ու եզրակացությունները արժանացել են և՛ բարձր գովասանքների, և՛ սուր քննադատության, մասնավորապես՝ հայոց պատմության քննության «ոչ ազգակենտրոն» մոտեցման առումով: Սակայն անհերքելի է նրա թողած ժառանգության բարձր արժեքը՝ ամենատարբեր տիպի փաստերի, փաստարկների ու տեղեկությունների համադրման, նոր գիտելիքի ստեղծման և այդ գիտելիքը կիրառելու մեթոդաբանության տեսանկյունից:

Նինա Գարսոյանի ներդրումը հայագիտության՝ որպես միջազգային գիտակարգի զարգացման մեջ կարևորվում է նաև նրա թարգմանություններով, որոնք հնարավորություն են ընձեռնել գիտական ամենալայն շրջանակներին ճանաչելի դարձնել հայազգի և հայալեզու հեղինակների աշխատությունները: Բավական է նշել հայ նշանավոր պատմաբաններ և բանասերներ Հակոբ Մանանդյանի (*The trade and Cities of Armenia in Relation to Ancient World Trade*, 1965), Նիկողայոս Ադոնցի (*Armenia in the Period of Justinian: The Political Conditions Based on Naxarar System*, 1970), Արամ Տեր-Ղևոնդյանի (*The Arab Emrates in Bagratide Armenia*, 1976) գրքերը, որոնցում արծարծված թեմաները քիչ էին ծանոթ արևմտյան գիտական շրջանակներին: Այս հրատարակություններն ուղեկցված են նրա մեծածավալ ծանոթագրություններով, բնագրային հավելվածներով ու անվանացանկերով:

Մեծ է Նինա Գարսոյանի վաստակը նաև կրթական ոլորտում: Նրա ուսուցչական եռանդն այնպիսի բեղուն արդյունքներ է տվել, որ հայագիտության և բյուզանդագիտության բնագավառներում ճանապարհ է բացել ներկա և ապագա համալսարանական մի քանի սերնդի համար: Մի ամբողջ դարակես և մինչև մեր դարի առաջին տասնամյակ նա դասավանդել և որպես հետազոտող ձևավորել է բազմաթիվ ուսանողների, որոնք այնուհետև նշանակալի ներդրում են ունեցել հայագիտության զարգացման և հայոց պատմության ու մշակույթի դասավանդման մեթոդաբանության մշակման գործում: Ղեկավարել է բազմաթիվ մագիստրոսական թեզեր և տասնչորս դոկտորական ատենախոսություն, ինչն արևմտյան համալսարանական աշխարհում շտեմնված երևույթ է համարվում: Նրա սաներից ոմանք դասավանդել ու այսօր էլ դասավանդում են ամերիկյան և եվրոպական հայագիտական ամբիոններում, աշխատում են պետական այլ հաստատություններում ու միջազգային կազմակերպություններում:

Նինա Գարսոյանին հիշում են որպես չափազանց բարեկիրթ, բարեհոգի, սրամիտ, հասնող, խրախուսող ու հոգատար անձնավորության, որ ոչ միայն

կրթում և ուսուցանում էր, այլև հոժարությունը ստանձնում էր խրատատուի և հոգեմոր պարտականությունը: Մեծ Տիկնոջ դռները միշտ բաց են եղել բոլորի համար, և առատաձեռն հյուրընկալությունն ու մեծահոգությունը թերևս նրա հայկական արմատների ամենավառ դրսևորումն էին:

Նինա Գարսոյանի քաղաքական գնահատականը հայոց պատմությանը, որը նրա ուսանողների ու գործընկերների շրջանում ստացել է «Գարսոյանի օրենք» մտերմիկ բնորոշումը և որն այսօր խիստ արդիական է հնչում, հետևյալն է. «Անտիկ դարաշրջանից ի վեր Հայաստանի աշխարհագրական դիրքը՝ հունահռոմեական և իրանական աշխարհների հանդիպման կիզակետում, ստեղծել է շատ նպաստավոր պայմաններ՝ երկրի մշակութային կյանքի համար՝ հարստացնելով այն երկու մեծ ավանդույթներով, սակայն կործանարար հետևանք է ունեցել նրա քաղաքական պատմության շարունակականության տեսանկյունից: Ընդհանուր առմամբ՝ Հայաստանը կարողացել է բարգավաճել միայն այն պարագայում, երբ այս երկու ուժերի հարաբերակցությունը հավասարակշռության մեջ է եղել, և որևէ մեկը ի վիճակի չի եղել ամբողջությամբ տիրապետություն հաստատելու Հայոց աշխարհի վրա»:

Նինա Գարսոյանը թեև քիչ է այցելել Հայաստան, սակայն մշտապես մասնագիտական ու բարեկամական կապի մեջ է եղել հայաստանյան շատ գործընկերների, մեծանուն գիտնականների հետ: Նրանց և Մաշտոցի անվան Մատենադարանի անունից անկեղծ ցավակցություն ենք հայտնում Նինա Գարսոյանի հարազատներին ու մտերիմներին:

Նազենի Ղարիբյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՈՒՆ

Ազատ Բոզոյան

Անտիոֆի դերը Լևոն Մեծագործի ֆաղափականության մեջ..... 5

Կարեն Մաթևոսյան

Ռուսի սուլթանության հակաթոռ կաթողիկոս Անանիան 22

Գագիկ Դանիելյան

Պաշտոնական նամակագրությունը և դիվանագիտական ընձաները
հայ-մոնղոլական հարաբերություններում 40

Էլինա Ղազարյան

Հարավային Կովկասի ֆաղափների դերը տարանցիկ
առևտրում ըստ Ժ.-ԺԴ. դարերի պարսկական և արաբական
պատմաաշխարհագրական երկերի 60

Գեորգի Միրզաբեկյան

1590 թ. Մելիֆ-Արալանլուի օսմանյան հարկացուցակը..... 74

Հայկազ Հովհաննիսյան

Մատենադարանի Ալ. Երիցյանի արխիվ. «Հյուսիսսփայլ» ամսագրի
հրատարակման նախապատմությունը..... 83

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Գևորգյան

Գրիգոր Բ. Վկայասերի նախաձեռնած թարգմանական շարժումը 93

Դոնարա Կարապետյան

Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» բժշկարանի
գրավոր աղբյուրները..... 113

Աննա Օհանջանյան

Դավանանքից դավանաբանական անցնելով. հայ կաթողիկ Հովհաննես Մշեցիև և նրա
հեղինակած «Բանալի նշմարտութեան» գիրքը (անգլերեն)..... 131

ԱՐՎԵՍ

Ավետ Ավետիսյան

«Իսահակի զոհաբերության» պատկերագրական տարբերակները
հայկական մանրանկարներում..... 166

Սեդա Մանուկեան

Բոնաշէնի մանրանկարչութեան մի օրինակ (Մատենադարանի ձեռ. 10789)..... 199

Աննա Արեշատյան

Դիտարկումներ Մակար Եկմայանի և Կոմիտասի դաշնակաձ պատարագի
մոնոդիաների մեղեդիական մտածողության շուրջ..... 212

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Անի Առաքելյան

Սուլեյման Դարաշամբեցի կատակերգակը և նրա նորահայտ երկերը..... 233

Լուսինե Թումանյան

Հովհաննես Բրգութենցի գանձերն ու տաղերը 268

Հասմիկ Կիրակոսյան

Նորահայտ մի փաստաթուղթ Շուշիում ավետարանական ֆարոգիչների
գործունեության մասին 295

Միհրան Մինասեան

Մշոյ Ս. Առաքելոց, Մատնավանք և Ս. Յովհաննէս վանքերու թեմական
գիւղերու, Բասենի ու Թախթի հայկական եկեղեցիներու, վանքերու և
գերեզմանատուններու անտիպ ցուցակ (1861-1866 թթ.)..... 305

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Գեորգ Տէր-Վարդանեան

Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների և գրադարանային
նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը 321

Տաթևիկ Մանուկեան, Քնարիկ Սարգսեան

Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր և
գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) 330

Հերմինէ Գրիգորեան

Յուցակ կիսաբունի Կիլպէնկեան թանգարանի հայերէն ձեռագրերի 350

ԲԱՆԱՎԵՃ**Նարինէ Վարդանյան**

«Կանոնագիրք հայոց» ժողովածուի զարգացման
պատմությունը. ուսումնասիրություն, թե՞ խեղաթյուրում 377

ՀԱՂՈՐԴՈՒՄ**Մանեա Էննա Շիրինյան**

Բյուզանդագետների համաշխարհային XXIV համաժողովը 420

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆ**Նազենի Ղարիբյան**

Վասն կենաց եւ գործոց Նինայի Գարսոյեան (1923-2022) 432

ԲԱՆԹԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ ՀԱՆԴԵՍԻ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆԸ

ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ 438

CONTENTS

HISTORY

Azat Bozoyan

The Role of Antioch in the Policy
of Levon the Magnificent5

Karen Matevosyan

Anticatholicos Anania of the Sultanate of Rum22

Gagik Danielyan

Official Correspondence and Diplomatic
Gifts in the Armenian-Mongol Relations (part 3).....40

Elina Ghazaryan

The Role of South Caucasian Towns
in Transit Trade According to the Persian and Arabic
Historico-Geographical Works of 10th-14th Centuries.....60

Georgi Mirzabekyan

The Ottoman Tax Register of Melik-Arslanlu of 1590.....74

Haykaz Hovhannisyan

Matenadaran, Archive of Al. Yeritsyan: Prehistory
of the Publication of the Journal “Nortern Lights”.....83

PHILOLOGY

Davit Gevorgyan

The Translational Movement Initiated by Grigor II V kayaser.....93

Donara Karapetyan

The Written Sources of Asar Sebastats‘i’s
Book of Medical Art.....113

Anna Ohanjanyan

Jumping In and Out of Confessions: The Armenian Catholic Yovhannēs
of Mush and his Book *Key of Truth*.....131

ART

Avet Avetisyan

The Iconographic Versions of *the Sacrifice Of Isaac*
in Armenian Miniatures.....166

Seda Manukyan

A Specimen of the Břnashen Miniature Art..... 199

Anna Arevshatyan

Observations on the melodic thinking in
the monodies of the Liturgy in the arrangements
by Makar Yekmalian and Komitas..... 212

PUBLICATIONS**Ani Arakelyan**

Comedian Suleiman Darashabets‘i and
His Newly Discovered Poems..... 233

Lusine Tumanyan

The Litanies and Odes of Yovhannēs Brgut‘Ents‘ 268

Hasmik Kirakosyan

A Recently Discovered Document about the Activity
of Evangelical Missionaries in Shushi..... 295

Mihran Minassian

A Previously Unpublished List of Diocesan Villages of the
Monasteries of Surp Arakelots in Mush, Madnavank and Surp Hovhannes,
as well as Armenian Churches, Monasteries and Cemeteries
of Pasen and Takht (1861–1866)..... 305

BIBLIOGRAPHY**Georg Ter-Vardanean**

The Program of Composing the Corpus of
Handwritten Remarks and Library Notes in
Armenian Early Printed Books..... 321

Tatevik Manukyan, Knarik Sargsyan

Handwritten and Library Notes of Early Printed Books
of Mesrop Mashtots Matenadaran (General Picture)..... 330

Hermine Grigoryan

Catalogue of the Armenian Manuscripts of the
Gulbenkian Museum in Lisbon..... 350

DISCUSSION**Narine Vardanyan**

History of the Development of the Armenian Book of Canons.

Study or Misrepresentation?.....377

REPORT**Manea Erna Shirinian**

The XXIV International Congress of Byzantine Studies.....420

OBITUARY**Nazenie Garibian**

The Life and Work of Nina Garsoïan (1923-2022).....432

СОДЕРЖАНИЕ

ИСТОРИЯ

| | |
|---|----|
| Азат Бозоян | |
| Роль Антиохии в политике Левона Великого..... | 5 |
| Карен Матевосян | |
| Антикатоликос румского султаната Анания..... | 22 |
| Гагик Даниелян | |
| Официальная переписка и дипломатические дары в армяно-монгольских отношениях (часть 3)..... | 40 |
| Элина Казарян | |
| Роль Городов Южного Кавказа в транзитной торговле по данным персидских и арабских историко-географических трудов X-XIV веков..... | 60 |
| Георгий Мирзабекян | |
| Османский налоговый реестр Мелик-Арсланлу 1590 г. | 74 |
| Айказ Оганесян | |
| Матенадаран, архив Ал. Ерицяна: Предыстория издания журнала “Северное сияние”..... | 83 |

ФИЛОЛОГИЯ

| | |
|--|-----|
| Давид Геворгян | |
| Переводческое движение, начатое Григором II Вкаясером..... | 93 |
| Донара Карапетян | |
| Письменные источники лечебника Асара Себастици “Книга врачебного искусства”..... | 113 |
| Анна Оганджян | |
| Переходя из одной конфессии в другую: армяно-католик Ованес из Муша и его книга «Ключ истины»..... | 131 |

ИСКУССТВО

| | |
|--|-----|
| Авет Аветисян | |
| Иконографические варианты “Жертвоприношения Исаака” в армянских миниатюрах..... | 166 |
| Седа Манукян | |
| Образчик брнашенской школы миниатюры..... | 199 |
| Анна Аревшатян | |
| Наблюдения над мелодическим стилем монодий литургии в многоголосных обработках Макара Екмаляна и Комитаса..... | 212 |

ПУБЛИКАЦИИ

Ани Аракелян

Сатирик-комик Сулейман Дарашамбский и его неизвестные стихотворения..... 233

Лусине Туманян

Гандзы и таги Ованеса Бргутенца 268

Асмик Киракосян

Новонайденный документ, описывающий деятельность евангелических миссионеров в Шуши 295

Мигран Минасян

Ранее не публиковавшийся список епархиальных сёл монастырей Сурб Аракелоц, Матнаванк и Сурб Ованес, а также армянских церквей, монастырей и кладбищ Басена и Тахта (1861-1866 гг.)..... 305

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Программа составления свода рукописных записей и библиотечных заметок на старопечатных армянских книгах 321

Татевик Манукян, Кнарлик Саргсян

Рукописные и библиотечные записи старопечатных книг Матенадарана им. Месропа Маштоца (общая картина)..... 330

Эрмине Григорян

Каталог армянских рукописей, хранящихся в музее Гюльбенкяна в Лиссабоне 350

ДИСКУССИЯ

Нарине Варданян

История развития “Армянской Книги канонов”. Исследование или искажение фактов? 377

СООБЩЕНИЕ

Манеа Эрна Ширинян

XXIV всемирный конгресс византинистов 420

НЕКРОЛОГ

Назени Гарибян

Жизнь и деятельность Нины Гарсоян (1923-2022)..... 432

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 34

BULLETIN OF MATENADARAN

Volume 34

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 34

Համակարգչային ձևավորումը և էչադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Չափսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 28

տպամանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/